ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

մայիսի 2021 թվականի № Ա
քաղ. Երևան

«ՍԱՆԷՆԵՐՋԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ «ՍԱՆԷՆԵՐՋԻ» ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆԻՑ ԱՌԱՔՎՈՂ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՍԱԿԱԳԻՆԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

1) Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2019 թվականի դեկտեմբերի 27-ի №535Ա որոշմամբ «ՍԱՆԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրվել է Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Մերձավան համայնքի վարչական տարածքում կառուցված «ՍԱՆԷՆԵՐՋԻ» արևային էլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ№0663 լիցենզիան, ինչի համար, ի թիվս պահանջվող այլ փաստաթղթերի, հիմք է հանդիսացել նաև «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2019 թվականի ապրիլի 17-ին տրամադրված էլեկտրաէներգետիկական համակարգին միացման №ՏՊ-170-6(10)/0198 նախնական տեխնիկական պայմանը, որում Կայանի միացումը ներկայացվել է «Սպանդարյան» 110/35/10 կՎ ե/կ-ի 10 կՎ ԲՍ-ի թիվ 10 բջջին,
2) Ընկերությունը 2020 թվականի օգոստոսի 8-ի գրությամբ Կայանի նախագծի հետ Հանձնաժողով է ներկայացրել «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2020 թվականի հունվարի 21-ին տրամադրված էլեկտրաէներգետիկական համակարգին Կայանի միացման ՆՏՊ-170-6(10)/0063 հիմնական տեխնիկական պայմանը, որում Կայանի միացումը ներկայացվել է «Սպանդարյան» 110/35/6 կՎ ե/կ-ի 6 կՎ ԲՍ-ի թիվ 10 բջջին,

3) Ընկերությունն էլեկտրաէներգետիկական համակարգին միացման 2019 թվականի ապրիլի 17-ի №ՏՊ-170-6(10)/0198 և 2020 թվականի հունվարի 21-ի NՏՊ-170-6(10)/0063 տեխնիկական պայմաններում առկա անհամապատասխանության պարզաբանման նպատակով 2020 թվականի նոյեմբերի 18-ի գրությամբ դիմել է «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերություն, որին ի պատասխան վերջինս իր 2020 թվականի նոյեմբերի 19-ի №ԴԳ-4305 գրությամբ հայտնել է, որ 2020 թվականի հունվարի 21-ին տրված №ՏՊ-170-6(10)/0063 տեխնիկական պայմանում տեխնիկական վրիպակի պատճառով կատարվել է ուղղում, մասնավորապես, նախկինում նշված «Սպանդարյան» 110/35/10 կՎ ե/Կ 10կՎ ԲՍ-ի թիվ 10 բջիջ»-ի փոխարեն գրվել է «Սպանդարյան» 110/35/6 կՎ ե/Կ 6 կՎ ԲՍ-ի թիվ 10 բջիջ», քանի որ ենթակայանում 10կՎ լարման մակարդակ գոյություն չունի,

4) Ընկերությունը 2021 թվականի ապրիլի 9-ին Հանձնաժողով է ներկայացրել արտադրության փուլ անցնելու նպատակով Հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 27-ի №535Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված ԼԷ№0663 լիցենզիայում փոփոխություններ կատարելու մասին դիմում և Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտ, որոնք ընդունվել են ուսումնասիրության 2021 թվականի ապրիլի 22-ին,

5) Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի սահմանման հայտի ուսումնասիրության արդյունքում փաստվել է, որ էլեկտրաէներգետիկական համակարգին միացման 2019 թվականի ապրիլի 17-ի №ՏՊ-170-6(10)/0198 և 2020 թվականի հունվարի 21-ի NՏՊ-170-6(10)/0063 տեխնիկական պայմաններում նշված՝ Կայանի՝ էլեկտրական ցանցին միացման վերջնակետերի տարբերությունը տեխնիկական վրիպակի արդյունք է, էլեկտրական էներգիայի բաշխման ցանցին միացման լարման փոփոխություն տեղի չի ունեցել, և Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության տարածքում վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմամբ էլեկտրական էներգիա արտադրող կայաններից առաքվող էլեկտրական էներգիայի վաճառքի սակագների հաշվարկման մեթոդիկայի 3-րդ կետի 4-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված 0.9 գործակիցը Կայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագնի նկատմամբ կիրառելի չէ, և այն ենթակա է սահմանման Հանձնաժողովի 2020 թվականի մայիսի 27-ի №176Ն որոշման 1-ին կետի 6-րդ

ենթակետով նախատեսված է 24.323 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի մեծությանը հավասար, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը, Հանձնաժողովի 2015 թվականի ապրիլի 22-ի №88Ն և 2020 թվականի մայիսի 27-ի №176Ն որոշումները՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. «ՍԱՆԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «ՍԱՆԷՆԵՐՋԻ» արևային էլեկտրակայանից առաքվող էլեկտրական էներգիայի սակագինը սահմանել 24.323 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 29.188 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2021 թվականի մայիսի -ից և գործում է մինչև 2021 թվականի նոյեմբերի -ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- մայիսի 2021թ.